


Գրանսիայի և պապականութեան դաշնաքը՝ կոնկորդատը և եկեղեցին պետութիւնից անջատուած։ Ապրիլի 17-ին ընդունուեց նաև երրորդ յօդուածը, որով փակուած հիմնարկութիւնների գոյքը տրւում է նոր հիմնուող գաւանակցական ընկերակցութիւններին։



ԱՆԱՊԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ

9.

Պախոմ ճիմնադիր վաների և վանական կեանքի.

Անապատականների նակումները։ Կրօնաւորները որպէս զենի իրանց մեծաւորների ձեռքին։ Կրօնաւորների մոլուքին նները.

Վանական կեանքի կանոն սահմանողն է թերայիշացի Պախոմը, որ ծնուեց 292 թուին։ Մեր Եկեղեցին չէ տօնում Պախոմի յիշատակը, սակայն մեր հոգեոր գրքերի մէջ¹⁾), բաւական տեղեկութիւն ունենք Պախոմի մասին։ Վարք Հարանցը տալիս է մեզ Պախոմի ուղղութեան մասին մի քանի տեղեկութիւններ, մէջ բերելով նրա ասածները կամ վճիռները կրօնաւորական կեանքի երեսյթների մասին։ Նրա կենսագրութեան մասին տեղեկութիւն ստանում ենք Յայսմաւորքից և Վարք Սրբոցի 12-րդ։ Հատորից։

Պախոմը, (Պախոմէոս կամ Պաքոմէոս, Պաքումէոս Պաքմէոսը) հեթանոս ծնողների զաւակ էր, սկզբում՝ զինուոր։ Հաւատաց Քրիստոսին և դեռ չըմկրտուած բան-

1), Յայսմաւորք Ապրիլի 10, Ահլի 10, բ կցորդ։ Բ. Վարք հարանց Ա. հատ. 92—93 453, 647, Նոյն Բ. հատ. 167, 398, 407, 422, 476, 490։ Դ. Լիակատար Վարք Սրբոց հատ 12-րդ։

տարկուեց. Կոստանդիանոսի ժամանակ, հալածանքը դաշտարելիս՝ ազատուեց բանտից, գնաց անապատ և ծաղկեցրեց կրօնաւորութեան կարգը Նեղոսի ափին Տարենայի մեծ վանք շինելով. Նա ուսանելով հրեշտակից՝ իւր միաբաններին գրաւոր կանոն տուեց և վախճանուեց 348 թաղախոմի քոյրն էլ միայնակեաց կոյսերի համար վանք շինեց:

Զ, Թօրերտսոնը, ազրիւր ունենալով նոյն հոգեւոր գիրքերը, առում է¹), որ Պախոմը վանական կեանքի կանոնները ստացաւ հրեշտակի ձեռքով պղնձի վրայ փորած գըրուած 24 յօդուածով. Նա Նեղոս գետի մի կղզու վերայ հիմնեց Տարեննայի վանքը. Վահճի միաբանութիւնը այնքան ընդարձակուեց, որ մինչև հիմնադրի մահը նրանից ութ վանք գոյացաւ 3000 միաբաններով, որոնցից 1400-ը գլխաւոր վանքումն էին ապրում. Հետեւեալ դարի սկզբին կրօնաւորների թիւը հասնում էր 5000-ի: Այսպէս կրօնաւորութիւնը, որ սկզբն առաւ միայնակեաց անապատական ճգնաւորներից, Պախոմի ձեռքով արդէն եղաբայրութիւն կամ միաբանութիւն դարձաւ և առանձին, անմարդաբնակ անտպատների քարանձաւների տեղ վանագեր գոյացան:

Վանակականները ապրում էին իւրաքանչիւր խցում երեք երեք հոգի միասին, և գտնուում էին մի մեծաւորի իշխանութեան տակ, որ առորերէն կոչում էր արքա (հայր), իսկ յունարէն՝ արքիմանղրիս (փարախապետ): Ամեն բան հասարակաց էր, և կարգի խանգարումն էր համարւում տսելը. «իմ վերաբկուն կամ գիրքը կամ դրիշը» Վանականները զբաղւում էին երկրագործութեամբ, կողովներ ու պարաններ հիւսելով, և այլ նման արհեստներով. արտադրութիւնները նաւակով տանում էին Աղէքսանդրիա, և վաճառում էին այնտեղ, որով ոչ միայն հոգացւում էին վանքերի պէտքերը, այլ դեռ մի գումար էլ տնտեսում ու ծախուռում էր բարեգործութեան համար: Վանականները օրը մի քանի անգամ աղօթում էին.

1), Աշ. Հրուտ. Պեր. I. համ. Մոնաшество եր. 294—323:

շաբաթուայ չորրորդ ու վեցերորդ օրերը, այսինքն, շորեքշաբթի և ուրբաթ պաս էին պահում, հաղորդուում էին շաբաթ ու կիւրակէ օրերը։ Նրանք միասին էին ճաշում, և սեղանը սկսուում էր ու վերջանում աղօթքով ու սաղմոսերգութեամբ։ Լուսթեամբ ու դէմքերը ծածկած էին ճաշում։ (վեղարի կամ կնգուղի ծածկոյթը փակելով դէմքի մեծ մասը, հնարաւորութիւն չէր տալիս տեսնել հանդէպը և աջ ու ձախ նստողներին) և բացի առաջները գրած կերակրից ուրիշ բան կամ իրանց սեղանակիցներին չէին տեսնում։ Կանոնը չէր սահմանափակում կերակրի քանակութիւնը, ամեն ոք իւր աշխատանքի վաստակն էր ուտում հասարակաց սեղանից։ Մեծ հոգածութեամբ խնամում էին հիւանդներին։ Վանական կրօնաւորները ինքնատիպ զգեստ էին հագնում, որոնց մէջ առաջին տեղը բռնում էր այծի մորթը։ — այս բանում հետևում էին անապատական կեանքի հայր Եղիա Մարգարէին։ — Նրանք միշտ գոտեալինդ պէտք է լինէին, միայն Ա. Հաղորդութիւն ընդունելու ժամանակ թոյլատրուած էր գոտին արձակել։ Հագնուած էին քնում այն էլ մի տեսակ աթոռների վրայ։ իսկ աթոռները այնպէս էին յարմարացրած, որ նրանք քնած ժամանակն էլ կանդնած դրութեան մէջ էին լինում։

Հարանց վարքում (Հատ. Բ, եր. 479), կարդում ենք... «յայտնեցաւ նմա (Պաքմէի) հրեշտակ Աստուծոյ և առէ... զքո ճանապարհու ուղղեցեր, ել այժմ յայրէդ և ժողովեան զմիայնակեացս և բնակեան ընդ նոսա. և որպէս ուսուցից քեղ, այնպէս խրատեա զնոսա։ Եւ գրեաց տախտակ մի հրեշտակն և ետ ծերոյն, և այս էին ոկիզը գրոյն. շնորհեսցես իւրաքանչիւր ըստ զօրութեան ուտել և ըմպել և ըստ զօրութեան իւրաքանչիւր գործ դիցես. և մի արգելուցուս՝ որք պահեն, և մի, որք ուտենն, և արա զօրն ի գործ մշակութեան նոյա և աղօթք նոյա՝ անձանձրոյթք։ Իսկ աւագացն, որք ծերքն են, արասցես խրճիթս և արկցես ի ներքս երիս երիս, և կերակուրք նոցա զինչ և ինդրեսցեն. նստել և ուտել և բաղմել, և

աղօթք նոցա անձանձրոյթք, և ագանելիք նոցա ցերեկն մաշկեայս և գիշերն այծեայս, և առնուլ նոցա օրէնս դուրբաժ, և զշարաժ և զկիւրակէ, և ի ժամ օրինացն գոտելածք եղիցին, և այս նշան կնդղաց նոցա, զի եղիցի նու առանց խաւու և խաչ ծիրանի յաջակողմանն եւ արար Պաքմէոս որպէս և հրամայեաց հրեշտակ տեառն. շինեաց վանս և ժողովեաց ի նմա եղբարս իրրե եօթն հաղարս, ուր են մինչեւ ցայսօր, ուր և մեռաւ երանելին Պաքմէոս»:

Կանանց կամ կուսանաց վանքների հիմնադիրն էլ Պախոմի է: — Մի անդամ Պախոմի քոյրը եկաւ նրան տեսնելու. Պախոմը նրան շընդունեց, միայն գոնապանի միջոցով յայտնեց՝ որ ինքն առողջ է: Պախոմը իմանալով, որ քոյրն էլ ցանկութիւն ունի վանք քաշուել, իւր միաբանների ձեռքով նրա համար մի առանձին վանք շինեց, ուր հաւաքուեցին հաւատաւոր կանայք կամ միաձնուհիք. նրանց վանամայր կարգուեց Պախոմի քոյրը:

Ինչ ասել կուղի, որ կրօնաւորները ամուսնանալ չեին կարող և կապուած չեին ամուսնական կեանքով: Հեսսեանց ուխտի և Պախոմի վանական կանոնների մէջ բաւական նմանութիւն կայ:

Երբ Պախոմը Տաքենայի վանքն էր հիմնում նոյն ժամանակին Մակար աւագը տեղափոխուում է Եգիպտոսի Լիրիական սահմանին մօտ Սկիտէի անապատը և Ամոնն էլ Նիտրիական լեռը: Շուտով սրանց մօտ խմբւում են կրօնաւորներ, որոնք ապրում էին կամ առանձին խցերում որպէս միայնակեացներ և կամ մի հանրակացարանում, որ Լավրա էր կոչում: Միայնակեացները շաբաթուայ վերջին և առաջին օրերին, այն է, շաբաթ և կիւրակէ, հաւաքում էին ժամասացութեան ներկայ լինելու: Եթէ մէկը բացակայում էր, իմանում էին որ հիւանդէ, իսկոյն նրա խուցը մարդ էին ուղարկում նրան այցելելու: Բացի այս դէպքից նրանք ամենևին չեին խօսում իրար հետ, Պաքմէոս մօտ 5000 էր: Պախոմի կանոնով, որ ուրիշ

միաբանական ուխտեր էլ ընդունել էին, երեքամեռայ փորձից յետոյ կարելի էր նորընծային արեղայտական կամ կրօնաւորական աստիճան տալ¹⁾:

Կրօնաւորների առաջին պարտքերն էին աղօթքն ու պահեցողութիւնը, կային էլ, ինչպէս Մակար ծերն էր²⁾, որոնց բերանը ամբողջ մեծ պասին ոչ հաց և ոչ հուր էր մտնում, միայն կիւրակէից կիւրակէ կազմամբակուրծ (երեկ մախով) էին ուտում: և աշխատելիս էլ, ձեռքերով գործում, բեռանով աղօթում էին: Նրանց կենցազավարութեան մասին գաղափար կազմելու համար պէտք է կարդալ նրանց վարքը, և նեղոսի խրատները³⁾, Կրօնաւորութեան հիմնադիրներն ու հայրերը խոստովանում էին, որ մի լրացուցիչ զբաղմունք էլ անհրաժեշտ է: Յայտնի առած կար, «զբաղուած կրօնաւորը մի գեւով էր պաշարւում, իսկ անգործը՝ ամբողջ լէզէօնով» Կրօնաւորների զբաղմունքը ընդհանրապէս ֆիւզիքական էր, նրանցից շատ քչերն էին զրագիտութեամբ զբաղւում: Երբ մի փիլիսոփայ հարցրեց Անտոնից, թէ նա ինչպէս է առանց գրքի օր անցկացնում, Անտոնը պատասխանեց: Իմ համար աշխարհը այնպիսի գիրք է, որ միշտ էլ ձեռքի տակ ունեմ և նրա մէջ կարող եմ Աստուծոյ խօսքը կարդալ՝ երբ էլ կամենամ: Յայսմաւուրքը այս գէպքը հետեալ կերպով է աւանդում: «Եւ այլք ոմանք յիմաստնոց գնացին առ Անտոն և ասեն, «Որպէս կարես միայն կեալ յանապատիս առանց գրոց: Եհարց ցնոսա Անտոն, Ասացէք ինձ, եթէ որ լաւ պատճառք են մարդկան, գիրն, եթէ միտք Ասեն նոքա. Միաքն: Ասէ Անտոն. ապա ողջամտացն գրոց պէտք ոչ են»:

«Կրօնաւորները կամ անապատականները շատ տգէտ էին. և շատերն իսկ հազիւ կարողանում էին կարդալ: Տգիտութիւնը, որ աշխարհիկ հոգեորականութեան մէջ արհամարհուած էր, անապատականների մէջ փառաքա-

1), Ист. Христ. Церк. հատ. I. եր. 298—302

2), Վարք Հարանց. հատ. I. վարք. Մակարայ. եր. 92—93.

3), Վարք Հարանց Բ. հատ.

նւում էր որպէս սրբութեան յատկանից իրանց տգիտութեամբ հեշտօրէն հպատակում էին նրան, ովնրանց մտքի վերայ աղդում էր և տոկուն յամառութեամբ պաշտպանում նրանց հայեացքները. Այսպիսի կրօնաւորները լաւ զէնք էին իրանց մեծաւորների հրամանները կատարելու Դրանք շատ անգամ իրանց չուզած եպիսկոպոսներին գահընկեց էին անում և ուղածին էլ ընտրում. Նրանց այս գործունէութեան ապացոյցն է արիոսական վէճերի ժամանակ. Անտոնի ղեկավարութեամբ նրանց կատարած գերը ուղղափառութեան յաղթանակի համար, կրօնաւորները խուսափում էին հոգեսոր աստիճաններից: Կրօնաւորութեան կանոններ սահմանող Պախոմը պատուիրում էր խուսափել ձեռնադրութիւնից՝ ինչպէս ծուղակից: Եղիպատոսում ոսվորական գարձուածը էր. «Կրօնաւորը պէտք է փախչի եպիսկոպոսից ու կանանցից, որովհետեւ նրանցից ոչ մէկն էլ հնար չի տայ կրօնաւորին իւր խցում հանգիստ մնալու և «զվերինն խորհելու»:

Անապատականների մէջ կային կրօնաւորներ էլ, որոնք արտաքուստ կրելով Պաւլոսի ու Անտոնի ձեւերը, չունէին ոչ առաջինի անկեղծ խստմբերութիւնն ու աշխարհատեցութիւնը և ոչ երկրորդի անկեղծ խստմբերութեան ու աշխարհատեցութեան միացած մարդասիրութիւնն ու անձանուրացութիւնը:

Զ. Բօքերտսոնը¹⁾ այսպէս է ընորոշում այդ տեսակ ճգնաւորներին. «ուէրը դէպի երկրայինը, որը, անապատականութիւն կամ ճգնաւորութիւն ընդունելով, ըստ երեոյթին յաղթուած էր կարծւում, վերակենդանանում էր նոր, աւելի գծուծ կերպով: Պատմում են, որ շատերը հարստութիւնից ու ճսխութիւնից հրաժարուած լինելով՝ մի որ և է գանակի, բեւեռի, ասեղի կամ գրչի համար գողդողում էին ու չափազանց ժլատութիւն ցոյց տալիս, ոչ ոքի չը թողնելով մօտենալ մինչև անգամ իրանց գըր-

1), Աստ. Հքիստ. ստ. պերկ. հատ. I. եր., 318:

քերին. և այդ տեսակ դատարկ բաների համար ձանալիկ վրդովւում էին:

Ժամանակի ընթացքում կրօնաւորները մոռանալով իրանց ուխտի սկզբնական նպատակը, սկսեցին քաղաք ներում թափառել նույն հանգանակելու պատրուակով։ Դարտաւորները, կրօնաւորների թափառումների մէջ, արշ դարադատութեան գործերին խառնուելու միտումն նկատելով՝ ներշնչեցին Թէոդոսին 390 թուի օրէնքով արդելել այդ բանը։ Սակայն երկու տարուց յետոյ օրէնքը այնքան թուլացաւ, որ կրօնաւորները սկսեցին դարձեալ յաճախել քաղաքները իրանց գէմ եղած անարդարութիւնների ու զրկանքների համար պաշտպանութիւն որոնելու պատըստակով։

«Տարօրինակ հագուստներով ու տարօրինակ կերպարներով երկցող կեղծաւոր կրօնաւորները շահագործում էին ժողովրդի դիւրահաւանութիւնն ու առատաձեռնութիւնը։ նրանք ծանր շղթաներով կաշկանդուած՝ կասկածելի մասունքներ էին մանածում, սարսափելի առասպելներ պատմում այն արկածների ու փորձութիւնների մասին, որոնց, որպէս թէ, ենթարկում էին նրանք չար ոգիսների կողմից։ մինչդեռ դադտուկ շռայլ և սանձարձակ կեանք էին վարում։ Լիրանիսուը նրանց նմանեցնում է մեղուներից անդորձներին, որոնք ուրիշների հաշուին ճոխապրում են։ Յուլիանոս ուրացող կայսրը ցինիկներին կծուբան ասած լինելու համար կրկնում էր։ «ցինիկները նման են գալիլիացիներից այն հերձուածներին, որոնք հրաժարում են իրանց պատկանած չնչին ստացուածների տիրապետութիւնից, որ հարստութիւն և գիրք ձեռք բերենաւ եւնատիսը ասում է։ «կրօնաւորները խոզի կեանք են վարում, նա է կարող մեծ իշխանութիւն ձեռք բերել՝ ով դերադասում է սե հագնելը և արհամարհում է ընդհանուր բարեվայելլութիւնը»։ — Որքան և քրիստոնէութեան թշնամիներից չափազանցօրէն լինեն դատափետուած կրօնաւորները, բայց անկարելի է չըխոստովանել, որ նրանց մէջ որոշ ճշմարտութիւն կայ։

Դրիգոր աստուածաբանը (Նաղիանդացի), թէև ինքն խստակրօն, բայց խստութեամբ դատապարտում էր մոռնողնների կամ վանական կրօնաւորների զանազան կեղծ ծաւոր ձեւերն ու ասում¹⁾). «Կրօնաւորներից շատերը հրեշտակ են թւում այն պատճառով, որ կոպտաբար են խօսում և երկար մազեր կրում, բայց իսկապէս նրանք ամեն տեսակ արատներով զեղծուած յանցաւորներ են»:

Դ.

Կրօնաւորական եւ վանական կեանից տարածուելը Եզիպտոսի սահմանից դուրս՝ պաղեստինում, Ասորինում (Սիրիա), Հայաստանում եւ Պոնտական գաւառներում: Կրօնաւորութեան այլափախումներ (Յուտանարակներ (Յօսկի); Սիւնակեացներ: Գրի մէջ նզնողներ:

Կրօնաւորական և վանական կեանքը Եզիպտոսից արագութեամբ տարածուեց նրա սահմաններից դուրս վանական կեանքը Պաղեստին ներմուծողն էր Անտոնի աշակերտ և նրան հետևող իլլարիոնը, որ 50 տարի տպրեց (306—356 թիւ) Գաղայի մօտի անապատում: Ս. Եփրեմի հանճարի ու բարեպաշտութեան շնորհիւ անապատական կեանքը Միջագետքում շատ համակրոսւթեամբ ընդունուեց, մեծ ծաւալ դտաւ և առանձին փայլ ստացաւ:

Սեբաստիայի Եւստաթէոս Հայ եպիսկոպոսը վանքեր հիմնեց Հայաստանում, իսկ Ա. Բարսեղը վանական միաբանութիւններ հաստատեց Հայաստանին սահմանակից Պոնտոսում և կապագովկիայում²⁾: Եւստաթէոսը հրապուրուած անապատական կեանքով և խստմբերութեամբ՝ ապրում էր նրանց պէս. իւր եպիսկոպոսական աստիճանին հակառակ, որ բարեվայելչութիւն է պահանջում, անա-

1). Жизнь и Труды Свв. Отцовъ. и Учителей церкви հեղ. Ֆարրարի, թարգմ. Թուա A. П. Лопухинъ, Ա. Պ. Բարգ.

2). Ист. Христ. Церк., հատ. I. եր., 301.

պատականների պէս խարազ ու մաշկեղէն էր հագնում, որի համար բանադրուեց իւր հօրից — կեռարիայի՝ Եւլալիս եպիսկոպոսից, և նրա տեղ եպիսկոպոս կարգուեց Մելիտոսը Եւստաթէոսը իրրե արդէն բանադրուած, չհրաւիրուեց Պեղագոնիայի Գանգրա քաղաքի ժողովին, որը առանց նրա պատասխանը կանխապէս լսելու, նզովեց նրան։ Գանգրայի ժողովը եղաւ ըստ Տ. Թօբերտոսնի¹⁾ 325—328 թ. ուրեմն Եւստաթէոսը այդ թուից առաջ յարած լինելով Արօնաւորութեան՝ նոյն կարգը ներմուծել էր և Հայաստան։

Սոկրատը, որի այս մասին գրածը թարգմանաբար մէջ ենք բերում, ասում է²⁾, որ Եւստաթէոսը նրա համար Գանգրայում կազմուած ժողովում գատապարտուեց, որովհետեւ կեռարիայի ժողովից բանադրուելուց յետոյ էլ չէր գագարում եկեղեցական կարգերը փոփոխել։ Արգելում էր ամուսնութիւնը, պատուիրում էր մսեղէն կերակուրներ չուտել՝ միոք պիղծ համարելով, մսակերներից և օրինաւորապէս ամուսնացածներից շատերին մերժում էր, կամ ամուսնացածներին իրարից բաժանում։ Թողած եկեղեցին՝ եկեղեցական խորհուրդները և ո. Հաղորդութիւնը տներումն էր կատարել տալիս։ Աստուածալաշտութեան պատրուակով ծառաներին իրանց տէրերից հանում էր։ Իմաստասէրի, այսինքն մօնոպնի սքեմ էր հագնում³⁾ և իրան հետեւղներին էլ օտարոտի պարեգօտ հագնել թեղդրում։ Կանանց մաղերը կտրում էր, խախտում էր յայտնի պասերը և պատուիրում էր տէրունական օրերին պառ պահել։ Թոյլ չէր տալիս ամուսնացածների տներն օրհնել. սովորական կարգով ամուսնացած քահանաներին օրհնութիւնից ու հաղորդութիւնից զրկում էր՝ պիղծ հա-

1), Ист. Христ. Церк. Համ I, եր. 1072.

2), Մեծ Սոկրատ հկեղ. պատմ. եր. 205. գլ. ԽԳ. Փոքր—Սոկրատ Պ. ՓԱ. եր. 39.

3), Жизнь и Труды Свв. Отцовъ и Учителей церкви. հեղ. Ֆարրարի թարգմ. А. П. Лопухинъ Ս. Պետերբուրգ. 1891 թ. բ. Св. Василій Великій եր. 460.

մարելով նրանց։ Այդպիսի շատ խօսութիւն էր անում
ու սովորեցնում։

Մեծն Բարսեղ, որ Եւստաթէոսի խօսակրօնութեան
հետեւզ էր, Պանտոսի մի առանձնացած տեղում սկսեց կրօ-
նաւորական կեանք վարել, նոյն բանին յորդորելով և իւր
դպրացական ընկեր Գրիգոր Նաղիանդացուն։ բայց վերջինս,
Բարսեղի անապատական խուցը առնէտի բոյն անուանելով՝
դրում է նրան, «Ով դուք պոնտական քիմմերցիններ»¹⁾,
անարև մարդիկ, դուք դատապարտուած էք, ինչպէս կասեն
ոչ թէ միայն վեց ամսեայ գիշերների, այլ ձեր կեանքի մի
մասն էլ ազատ չէ ստուերից, որովհետեւ ձեր ամբողջ
կեանքը միմիայն գիշեր է, և ա. Գրքի տոածին համեմատ,
յիրաւի, մահուան ստուեր։ Գովում եմ այդ նեղ ու ապա-
ռաժուատ շաւիզը, թէև չըգիտեմ այն դէպի Աստուծոյ ար-
քայութիւնն է տանում, թէ դէպի գժոխք, սակայն կը-
ցանկայի, որ քեզ դէպի արքայութիւն տանէր²⁾։

Կրօնաւորների կանոններն ու սովորութիւնները, ա-
սում է Զ. Թօբերտոսն³⁾), նայելով հանգամանքներին և
հիմնադիրների հայեացքներին, տարբեր էին։ Արեւելքում
նրանք զբաղւում էին արդիւնաբերական զանազան ձեռ-
նարկութիւններով, օրինակ, դաշտային աշխատանքներով,
հիւսնութեամբ, ոստայնանկութեամբ, երկաթագործու-
թեամբ, կողով հիւսելով և փայտեայ հողաթափներ շինե-
լով։ Եւ, երանելի Աւգուստինը, այն կրօնաւորների դէմ,
որոնք ցանկանում էին այդ տեսակ զբաղմունքներից խու-
տափել, խրատներ գրեց։ «Մի վանք կար, ուր 1300 կրօ-
նաւորներ էին ապրում, ասում է Մակարը⁴⁾», ես այդ
վանքը տեսայ, նրա մէջ 15 կարկատիչ, 20 թափիչ, 5 հիւսն,

1), Քիմմերեանք յունական առասպելաբանութեան համեմատ Սկիւթացոց աշխարհի ամենհիւսիսային սահմանում յաւիտենական խուարի մէջ ապրող մի ժողովուրդ էին։

2), Жизнь и Труды Свв. Отц., —Св. Григорій Назіан-
зинъ, եր. 397.

3), Ист. Христ. Церкви հատ., I. եր. 302.

4), Վարք հարանց, հատ., Բ. եր. 475—476.

10 դարբին, 7 ուղտապան և 40 էլ աշխատաւոր կային, որոնք աշխատելով՝ թէ իրանց պէտքերն էին լցնում և թէ բանտերին ու աղքատներին մասն հանում։ Ընդ հակառակն Ս. Մարտինը այդ տեսակ զբաղմունքը արգելք է համարում բարեպաշտութեան, և երիտասարդ կրօնաւորներին, բացի դրգեր արտադրելուց՝ ուրիշ ոչ մի զբաղմունք չէր թոյլ տալիս։ Գաղղիայի կրօնաւորները, որոնք բարբարոսների կուսակաշտութեան և սնապաշտութեան դէմ կուտելու գործում մեծ ջանք էին թափում, իրանց ազատ ժամերը այնպէս չէին գործադրում, ինչպէս Եգիպտոսի ու Ասորէքի անապատականներն ու վանականները։ Հագնելիքի և ուտելիքի վերաբերութեամբ ինկատ էր առնելում նաև տեղական կլիման։ Մարտինի վարքը գրողը ասում է. «Յոյներն ունեն ուտելու մեծ ախորժակ, իսկ Պաղպիացիք՝ բնական գործ»։

«Պախոմը պահանջում էր երեքամեռյ փորձից յետոյ միայն կրօնաւոր ընդունել։ Ս. Բարսեղը պահանջում էր, որ կրօնաւորութեան մէջ մտնել ցանկացողը որոշեալ կարգով խոստովանուի, կրօնաւորութիւնից հեռացումն ապաշխարութեան էր ենթարկելում, բայց կրօնաւորութիւն ընդունելը անդարձ չէր, և մի քանի դէպքերում հեռացումն մինչև անդամ քաջալերում էր, որպէս լաւգոյն միջոց գժուարութիւններից դուրս գալու համար»։

Անապատականութիւնն ու կրօնաւորութիւնը որքան հեռանում էին իրանց հիմնադիրներից թէ ժամանակով և թէ տեղի գրութեամբ, այնքան այլափոխում էին։ Զ. Քօբերտոսոնը նկարագրելով այդ այլափոխութիւնը, ասում է¹⁾. «Կրօնաւորութեան ոգին երբեմն երևան էր գալիս տքնութեան անսովոր ձևերով։ Այսպէս, Ուկի (Յօսկի)²⁾ կամ իստաճարակ տեսակը յառաջ եկաւ Միջադետքում, բայց յետոյ Պաղեստինումն էլ հետեւզներ ունեցաւ. ապ-

1). Ист. Христ. церкв. հատ. I. եր. 319.

2). Զ. Քօբերտոսոն առնելով Սոլոմոնոսից (IV, 33) և Եւագրեց (I, 21) առանգում է խոտաճարակների կամ Ուկի-ների (Յօսկի).

բում էին նրանք լեռներում բացօթեայ, համարեա բոլոր թափին մերկ թէ ամառուայ խորշակին և թէ ձմռան սառա նամանիքներին, կերակրում էին արմատներով ու խոտերով, այնպէս այլակերպում էին, որ հոգով ու մարմնով կորցնում էին մարդկային կերպարանքը,

Խոտաճարակների տիպ կարելի է համարել Մարիամ Եգիպտացուն¹⁾), որ եգիպտոսի Աղէքսանդրիա քաղաքից մի պոռնիկ կին էր։ Ա. Խաչի տօնի առիթով ուխտաւոր ների հետ գնաց երուսաղէմ՝ աշխարհախումբ բազմութեան մէջ իւր խառնագնաց կեանքով փող վաստկելու. բայց տօնի փառաւոր պաշտամունքը տեսնելով՝ զղչաց, անապատ քաշուեց՝ հետը միայն երեք նկանակ ունենալով և Յորդանանի այն կողմը, խորին անյայտութեան մէջ 47 տարի ճգնեց։ Նա իւր ճգնաւորական բոլոր կեանքում դալար խոտ էր ուտում անասունի պէս երեսը գետնին քսելով և ճարակելով։ Զոօիմոս ճգնաւորը այդ անապատում մարդ գտնելու նպատակով քսան օր թափառելուց յետոյ, նկատում է ստուերի նման մի մարդկային կերպարանք արեի խորշակից և ցրտի սառնամանիքից բոլորովին սեացած և ծածկուած մազերով, որ ասրի պէս սպիտակ էին։ Այդ Մարիամ Եգիպտացին էր, որ հաղորդուեց, վախճանուեց և թաղուեց Զոօիմոսի ձեռքով։

Այս քրիստոնեայ ճգնաւորներից ումանք էլ մարդկային զդացմունքից գերազանցող կատարելութեան համելու ձգտմամբ տարօրինակ վարքով և այլանդակ կերպարանքով սքանչացնում էին քաղաքների ընակիչներին. դժանց նպա-

ճգնութեան պատկերը, ի՞նչ առընչութիւն կայ մեր Ուկեանց և Միջագետքի Յօսէների մէջ, կաշխատենք պարզել յետոյ։ Մեր յարդելի բարեկամ Քոկտոր ալ. Մկրտիչ Ղազարեանը, որին դիմել էինք խնդրելով պարզել Ուկի կամ Յօսէն բառի ծագումն, յայտնեց մեզ որ Ուասկա հին պարսկերէն ծառայ կընշանակի (Բրոկիլման բառարան)։ Գրա ասորելէնը Աբդա է, որ դարձեալ ծառայ է նշանակում եւ կրօնաւորի մտքով ևս գործածւած է (Ասորերէն բառարան)։ 1), Վարք Հարանց հատ. I. եր. 287—319։ Յայսմաւ. Ապրելի Ա. և Արեգի ԻԳ. վարք Մարիամու Եղիպտացւոյն։

տակն էր արհամարհանք ցոյց տալ դէպի երկրաւոր վայելշութիւնը։ Եւ դարի սկզբին յայտնութեցին նոր աեսակի ճգնաւորներ, որոնք Սիւնակեաց էին կոչւում։

Այս աեսակ Սիւնակեացներից առաջինն էր Սիմեօնը, Ասորիքի և Կիլիկիայի սահմանի վերայ եղած դաւառից նա տղայ ժամանակ արածում էր իւր հօր ոչխարները, յաճախելով եկեղեցի, հրապուրուեց կրօնաւորութեամբ և 14 տարեկան հասակում մտաւ խստակրօն կրօնաւորների մի վանք, նա իւր համբերութեամբ և իւր անձը խոշտանգելու արտակարգ միջոցներով զարմացրեց և հիացրեց վանականներին։ Մի անգամ ջրի ուղարկուած լինելով՝ առաւ արմաւենու կոչտ պարանը, որով ջուր էին քառշում հորից, պինդ փաթաթեց իրան՝ և յայտնեց, որ կորցրել է պարանը, նրկու շաբաթից յետոյ գաղտնիքը բացուեց. կոչտ պարանը մտել էր նրա մարմնի մէջ և հոսող արիւնի կաթիլները յայտնեցին գաղտնիքը։ Քննութիւնից երեաց, որ պարանը այնպէս էր մտել նրա մարմնի մէջ, որ հաղիւ էր նկատուում։ Պարանը դուրս կորզելու ժամանակ Սիմեօնը ամեննեին ցոյց չըտուեց, որ ցաւ է զգում, և թոյլ չըտուեց, որ վէրքերի վերայ դեղ դնեն։ Վանահայրը հարկադրուեց նրան հեռացնել վանքից, որ նրա խստակեցաւթիւնը նախանձորդներ չըյարուցանի վանքում, որը աւելի թոյլ միարանների համար կարող էր վտանգաւոր լինել։ Դետնի երեսին տքնութիւնները բաւական չըհամարելով՝ նա սիւներ էր շինում և նրա վերայ ամառ ձմեռ, գիշեր ցերեկ տքնում էր։ Հետզետէ սիւները բարձրացնում էր, վերջին սիւնը քառասուն կանգուն բարձրութիւն ունէր։ Սիմեօնը պարանոցին կրում էր ծանր շղթայ և անդադար ծունը էր դնում. մի ականատես կարողացել է մինչև 1240-ը հաշուել, այնուհետեւ կորցրել է ծնրադրութեան հաշիւը։ Նա շատ քիչ բան էր ուտում և ամբողջ մեծ պասսին ծում էր մնում. մարդարէութիւն էր անում և հրաշքներ գործում։ Նրա հետ յարաբերութիւն էին պահում կայսրներ, թագաւորներ, եպիսկոպոսներ և շատ նշանաւոր մարդիկ։

«Սիմեոնը քրիստոնեայ աշխարհում համաշխարհային հռչակ ստացաւ, Շատերը Պարսկաստանից, Եթովպիայից, Սպանիայից, Դաղղիայից և Բրիտանիայից գալիս էին նրան տեսնելու, Դեռ նրա կենդանութեան ժամանակ Հռովմի արհեստանոցում նկարում էին նրա պատկերը, համարեալով այն գիւահալած։ Սիմեոնը վախճանուեց 460 թուին 72 տարեկան հասակում, 47 տարի սիւնի վերայ ճգնելով։

Մեր հոգեոր գորերում ևս¹⁾ գտնում ենք Սիմեոն Սիւնակեացի վարքը պատմուած այնպէս, ինչպէս Տօբերտունն է աւանդում, բայց ծննդավայրի որոշ ցուցմամբ։ Յայսմաւուրը գրում է, որ Սիմեոնը Կիլիկիայի Սիսան գիւղաքաղաքիցն էր. «Ի ժամանակս բարեպաշտ կայսերն աւանդում է և Մարտիրոս պատրիարքի»։ Լևոն Ա. Ժառ Լևոնի մեծի և Մարտիրոս պատրիարքի։ Լևոն Ա. Ժառ գաւորում էր 457—474 թ. իսկ Վարք Հարանցը Սիմեոնին Անափոքացի է համարում, երևի Անտիոքին մօտ ճգնելուն համար։

Սիմեոնին յաջորդեց Գանիէլ Միջագետացին, որ շարունակեց սիւնի վերայ ճգնութիւնը 461—494 թիւը։ Սիւնակեացներին թէե սակաւ, բայց հետեղողներ եղան Յունատանում և Ասորիքում։

Եթէ սիւնի վերայ ճգնողներ կային, կային և գրի մէջ ճգնողներ, որոնց գլուխուրն էր Յովհանն գրնեցին²⁾։ Սա Փիւնիկէի Կեսարիա քաղաքից էր, քրիստոնեայ բարեպաշտ մի այրի կնոջ զաւակի Նալածանքի ժամանակի Յովհաննու մայրը, որի անունն էր Յովիա, թօղնում է իւր ապարանքը և ապաստանում մի աննշան խրճիթում, ու այստեղ ապրում թաքուն։ Այդ ժամանակ Յովհանը 15 այնտեղ ապրում թաքուն։ Այդ ժամանակ Յովհանն տարեկան էր և միշտ եկեղեցի էր յաճախում սովորական ժամերին։ Եկեղեցում մի մարդ նրա ջերմեռանդութիւնը տեսնելով՝ խորհուրդ տուեց անապատ գնալ և ճգնել, Յովհանը հետեւեց այս խորհրդին. առաւ մօր օրհնութիւնը,

1), Յայսմաւ. Սեպտեմբերի ԺԱ. և Նաւասարդի ԻՔ. Լիակատ տար Վարք Սրբոց Հատ. Զ. 25; Վարք Հարանց Ա. Հատ. 324—326.

2), Վարք Հարանց Հատ. Ա. եր. 113—125.

Հրաժեշտ տուեց մօրն ու միակ փոքրիկ քրոջը, դուրս
եկաւ տանից և գնաց Յայնկոյս - Յորդանանի անապատը:
Առաջին գիշերը նա մի եղիստացի անապատականի մօտ
անցրեց և ուզեց նրա մօտ մնալ անապատական կարգերը
սովորելու համար: Եօթներորդ օրը աստուածային աղղեա-
ցութեամբ Յովհանը թողեց անապատականին և աւելի
խոր անապատ քաշուեց: Հրեշտակի ուղղեկցութեամբ մի
օր ճանապարհ գնալուց յետոյ Յովհանը մի գուր գտաւ,
աղօթեց և ընկաւ մէջը. նա խնդրեց Աստուածուց, որ իրան
այնտեղ կերակրի և ուխտեց՝ որ մինչև մահ այնտեղից
դուրս չըդայ: Դրի մէջ ճգնելիս՝ սովորական փորձութեան
ենթարկուեց և յաղթող հանդիսացաւ: Տասն տարի դրի
մէջ մնաց, վախճանուեց 25 տարեկան հասակում և թաղ-
ուեց Կրիսոս անապատականի ձեռքով, որը և Յովհաննու
վարքը գրել տուեց մի եկեղեցական պաշտօնեայի: Խոիւ-
սիոն անապատական ծերն էլ հրեշտակի աղղմամբ գրեց
Յովհաննու վարքը, որ համեմատ գտնուեց Կրիսոսի գրել
տուածին¹⁾:

Մ. Վ. Աւգերեանը²⁾ արդի քննիչներից և Բոլլան-
դեաններից առնելով ասում է, որ Յովհան դբնեցին հայ
էր, Փոքր-Հայոց Կատանիա քաղաքից, Պ. գարում, թէև
Յայսմաւուրքը ասորի է անուանում և Գ. գարում ապրած:
Յովհան դբնեցին տօնւում է սրբոց հարցն եղիստ-
տացւոց հետ գեկտեմբերի սկիզբներում:

Սիմէօն սիւնակեացը տօնւում է Վարագոյ Խաչի
պահոց բշ, օրը սեպտեմբերի վերջերին:

Յոյն-Ռուս եկեղեցին Մարիամ եղիստացու յիշա-
տակը տօնում է ապրելի 1-ին, իսկ հայ եկեղեցին
չի տօնում:

Յուսիկ Խաչ.

(Կը շաբունակուի)

— ՀՀ ՀՀ —

1), Վարք Սրբոց համ, Թ. Էը. 268—273,
2), Նոյն: